Աշխատանքի ծածկագիրը 466632

ՈՐՈՇՈՒՄ

Ք.Երևան
Բողոքարկման հանձնաժողովը հետևյալ կազմով՝
Նախագահությամբ՝
Սերգեյ Մարաբյանի
Մասնակցությամբ անդամներ՝
Մակար Կիրակոսյանի
Տիգրան Ոսկանյանի

23.07.2026թ.

Բողոքարկման հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) քննության առնելով դատավորների թեկնածուների ցուցակի քրեական մասնագիտացման բաժնի համալրման նպատակով հատուկ կարգով անցկացված որակավորման գրավոր քննության արդյունքների դեմ բերված բողոքը

ՊԱՐԶԵՑ

Բողոքարկվել է թեստային առաջադրանքի 2-րդ հարցը:

Քննարկելով բողոքաբերի առաջարկած տարբերակը գտնում ենք, որ այն անհիմն է՝ հիմք ընդունելով ՀՀ քրեական օրենսգրքի 28-րդ հոդվածի 3-րդ մասի այն դրույթը, համաձայն որի եթե սխալմամբ վնաս է պատճառվում համարժեք օբյեկտի, ապա արարքը որակվում է ըստ փաստացի առաջացած հետևանքի:

Գնահատականը ենթակա չէ փոփոխման:

Բողոքարկվել է թեստային առաջադրանքի 3-րդ հարցը:

Քննարկելով բողոքաբերի առաջարկած տարբերակը գտնում ենք, որ այն անհիմն է, իսկ բերված փաստարկները բավարար չեն վերջինիս առաջարկած տարբերակը ճիշտ գնահատելու համար:

Գնահատականը ենթակա չէ փոփոխման:

Բողոքարկվել է թեստային առաջադրանքի 8-րդ հարցը:

Քննարկելով բողոքաբերի առաջարկած տարբերակը գտնում ենք, որ այն անհիմն է, իսկ բերված փաստարկները բավարար չեն վերջինիս առաջարկած տարբերակը ճիշտ գնահատելու համար:

Գնահատականը ենթակա չէ փոփոխման:

Բողոքարկվել է թեստային առաջադրանքի 9-րդ հարցը:

Ուղենիշային պատասխանը ճիշտ է, իսկ բողոքաբերի փաստարկները անհիմն, քանի որ ձեռք բերված հոգեներգործուն նյութը ևս հանդիսանում է ՀՀ քրեական օրենսգրքի 396-րդ հոդվածով նախատեսված հանցագործության առարկա, իսկ ինչ վերաբերվում է ձեռք բերված առարկայի և դիտավորության մեջ ընդգրկված առարկայի տարբեր լինելուն, ապա դա չի կարող հանգեցնել հանցափորձի:

Գնահատականը ենթակա չէ փոփոխման:

Բողոքարկվել է թեստային առաջադրանքի 12-րդ հարցը:

Բողոքաբերի ներկայացրած փաստարկները հիմնավոր է, ուստի վերջինիս անհրաժեշտ է շնորհել 1 միավոր:

Բողոքարկվել է թեստային առաջադրանքի 13-րդ հարցը:

Ուղենիշային պատասխանը ճիշտ է, իսկ բողոքաբերի փաստարկները անհիմն: Ինքին մահվան փաստի առկայությունը բացառում է միայն սպանության փորձը, որպիսի տարբերակը ընտրել է բողոքաբերը:

Գնահատականը ենթակա չէ փոփոխման:

Բողոքարկվել է թեստային առաջադրանքի 21-րդ հարցը:

Ուղենիշային պատասխանը ճիշտ է, իսկ բողոքաբերի փաստարկները անհիմն՝ հիմք ընդունելով ՀՀ քրեական օրենսգրքի 16-րդ հոդվածի 1-ին մասի այն ձևակերպումը, որ հանցանք է համարվում սույն օրենսգրքով նախատեսված, պատժի սպառնալիքով արգելված, հանցագործության սուբյեկտի կողմից մեղավորությամբ կատարված արարքը:

Գնահատականը ենթակա չէ փոփոխման:

Բողոքարկվել է թեստային առաջադրանքի 23-րդ հարցը:

Ուղենիշային պատասխանը ճիշտ է, իսկ բողոքաբերի փաստարկները բավարար չափով հիմնավորված չեն, քանի որ Ֆ-ի արարքում արդեն իսկ առկա է խոշոր չափերի ավարտված գողության հատկանիշները:

Գնահատականը ենթակա չէ փոփոխման:

Բողոքարկվել է թեստային առաջադրանքի 25-րդ հարցը:

Ուղենիշային պատասխանը ճիշտ է, իսկ բողոքաբերի փաստարկները անհիմն են: Առաջադրանքում նկարագրված Ա.-ի գործողությունները ուղղված են ընդամենը նրա մտադրության բացահայտմանը և չեն պարունակում հանցագործության նախապատրաստության տարր հանդիսացող այլ պայմաններ ստեղծելու հատկանիշ, քանի որ այն ենթադրում է բուն հանցագործության կատարմանն ուղղված գործողությունների կատարում: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ փաստացի Ա-ի և ընկերոջ միջև պայմանավորվածությունն էլ հնարավոր չի եղել ձեռք բերել, ուստի խոսք լինել չի կարող հանցանք կատարելու այլ պայման ստեղծելու մասին: Այս հանգամանքը հաստատվում է նաև բողոքաբերի կողմից վկայակոչված ՀՀ վճռաբեկ դատարանի որոշմամբ:

Գնահատականը ենթակա չէ փոփոխման:

Բողոքարկվել է թեստային առաջադրանքի 32-րդ հարցը:

Քննարկելով բողոքաբերի առաջարկած տարբերակը գտնում ենք, որ այն հիմնավոր է, քանի որ առաջադրանքի ա/ և բ/ պատասխանները ևս առերևույթ համապատասխանում են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 11-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված պայմաններին:

Անհրաժեշտ է շնորհել 1 միավոր:

Բողոքարկվել է թեստային առաջադրանք 34-րդ հարցը:

Բողոքաբերի հիմնավորումները առ այն, որ առաջադրանքը ունի տեխնիկական վրիպակ՝ բացակայում է օժանդակ բայ, որը թյուրըմբռնման տեղիք

է տալիս, ընդունելի է: Հետևաբար՝ կարող է ընդունելի լինել բողոքաբերի կողմից տրված պատասխանը:

Անհրաժեշտ է շնորհել 1 միավոր:

Բողոքարկվել է թեստային առաջադրանք 44-րդ հարցը:

Բողոքաբերի հիմնավորումները ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 330-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի լույսի ներքո՝ առ այն, որ ուղենիշային ճիշտ պատասխան է ընդունվել մեղադրյալի մահացած լինելը, մինչդեռ մեջբերված նորմից ակնհայտ է, որ մեղադրյալի մահացած լինելը անհրաժեշտ, սակայն ոչ բավարար պայման է ցուցմունքի հրապարակման համար, քանի որ դատավարական նորմը սահմանում է նաև միաժամանակյա առկայության պարտադիր մեկ այլ պայման՝ մինչդատական վարույթում ծանր հիվանդության հիմքով տվյալ անձի ցուցմունքի դեպոնացման անհրաժեշտության ողջամտորեն բացակայությունը, որի մասին, սակայն, որևէ նշում առկա չէ ոչ խնդրում, ոչ ներկայացված պատասխանի տարբերակում՝ ընդունելի և հիմնավոր են:

Անհրաժեշտ է շնորհել 1 միավոր:

Բողոքարկվել է թեստային առաջադրանքի 47-րդ հարցը:

Բողոքաբերի հիմնավորումները իրավաչափ են և բխում են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 464.1-րդ հոդվածի 2-րդ մասի կարգավորումներից:

Անհրաժեշտ է շնորհել 1 միավոր:

Բողոքարկվել է թեստային առաջադրանքի 57-րդ հարցը:

Ուղենիշային պատասխանը ճիշտ է, իսկ բողոքաբերի փաստարկները, թեև ունեն ողջամիտ տրամաբանական հենք, սակայն չեն բխում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 340-րդ հոդվածից:

Գնահատականը ենթակա չէ փոփոխման:

Բողոքարկվել է թեստային առաջադրանք 58-րդ հարցը:

Բողոքաբերի հիմնավորումներն ընդունելի են, քանի որ հարցադրմամբ ներկայացված ուղենիշային պատասխանը չի բխում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 143-րդ հոդվածով նախատեսված դրույթից, հետևաբար ներկայացված տարբերակներում ճիշտ պատասխանը բացակայում է:

Անհրաժեշտ է շնորհել 1 միավոր:

Բողոքարկվել է իրավական խնդիրը 1-ը, 3-ը, 6-ը, 7-ը:

Բողոքարկված խնդիրների պարագայում հանձնաժողովի գնահատականը իրավաչափ է, իսկ բողոքաբերի կողմից ներկայացրած փաստարկները բավարար չափով պատճառաբանված չեն:

Գնահատականը ենթակա չէ փոփոխման:

Բողոքարկվել է իրավական խնդիրը 5-ը:

Բողոքաբերի պատճառաբանությունները, որ իր կողմից ներկայացված վերլուծությունները, որ իրար հակասող չեն, ընդունելի է, քանի որ ակնհայտ է, որ ներկայացվում է տարբեր իրավիճակներում քրեադատավարական նորմի կիրառման վերաբերյալ և արդյունքում հանգում իրավաչափ լուծման, որը արձանագրվել է նաև ստուգող հանձնաժողովի կողմից: Արդյունքում գտնում ենք, որ բողոքաբերին պետք է լրացուցիչ շնորհել 2 միավոր:

Բողոքարկվել է իրավական խնդիրը 8-ը:

Առաջադրանքի փաստական կողմի վերլուծության և առաջարկվող հարցադրման համադրությունից հետևում է, որ բողոքաբերի պատասխանը պետք է վերաբերվեր Դատարանի գործողությունների իրավաչափությանը և մասնավորապես՝ ժամկետի հիմքով միջնորդությունը մերժելու իրավաչափությանը: Մինչդեռ ուղենիշային պատասխանում շեշտադրում է արվում է այն հանգամանքի վրա, թե ինչ չափանիշների պետք է համապատասխաներ քննիչի միջնորդությունը և, հետևաբար ըստ ուղենիշային պատասխանի քննիչի միջնորդությունը պետք է մերժվեր ընթացակարգը չպահպանելու հիմքով, որը վարույթի հարուցումը մերժելու հիմք է, ոչ թե միջնորդությունը: Հետևաբար՝ ելնելով այս շփոթմունքի բարձր աստիճանից բողոքաբերը չէր կարող պատկերացնել, որ իրենից ակնկալվում է վարույթի հարցումը մերժելու հիմքը քննարկել որպես միջնորդությունը մերժելու հիմք: Բողոքաբերի պատասխանը պետք է համարել լիարժեք:

Անհրաժեշտ է շնորհել 3 միավոր:

Միաժամանակ բողոքարկման հանձնաժողովը արձանագրում է, որ թեստային առաջադրանքների և իրավական խնդիրների վերաբերյալ բողոքաբերի կողմից ներկայացրած բողոքը քննարկվել է դրա հիմքերի և հիմնավորումների սահմաններում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Բարձրագույն դատական խորհրդի 26.04.2026 թվականի թիվ ԲԴԽ-36-Ո33 որոշման 4-րդ հավելվածի 4-րդ բաժնի 9-րդ կետով՝ Հանձնաժողովը

ՈՐՈՇԵՑ

Թիվ 466632 ծածկագրով աշխատանքի քննության արդյունքների դեմ բերված բողոքը բավարարել մասնակի՝ թեստային առաջադրանքի 12-րդ, 32-րդ, 34-րդ, 44-րդ, 47-րդ, 58-րդ հարցերի համար բողոքաբերին շնորհել մեկական միավոր, իսկ իրավական խնդիր 5-ի համար շնորհել 2 միավոր, 8-ի համար շնորհել 3 միավոր, արդյունքում թեստային առաջադրանքի ընդհանուր հանրագումարը կազմում է 50-ը միավոր, իսկ իրավական խնդրի ընդհանուր հանրագումարը կազմում է 31,5 միավոր:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄՆԵՐ՝